Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին

10.06.2019թ. *ք. Երևան*

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի ավագ հարկադիր կատարող, արդարադատության ավագ լեյտենանտ Էդ.Չոբանյանս, ուսումնասիրելով 08.04.2019թ. վերսկսված թիվ 04883704 կատարողական վարույթի նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 10.01.2019թ. տրված թիվ ԵԿԴ/5057/02/17 կատարողական թերթի համաձայն պետք է՝ Մարինե Կարենի Սարգսյանից հոգուտ <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ-ի բռնագանձել 590.203 ՀՀ դրամ և կատարողական թերթով հաշվարկվող փոկոսագումարներ:

Պարտապանից պետք է բռնագանձել նաև բռնագանձման ենթակա գումարի 5 փոկոսը՝ որպես կատարողական գործողությունների կատարման ծախս:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 43 հոդվածներով և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.1,35.2,35.3 և 35.4 հոդվածներով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Պարտապան՝ Մարինե Կարենի Սարգսյանի կողմից գրավադրված ներքոհիշյալ ոսկյա իրերը

հ/հ	*գույքի անվանումը և նկարագիրը*	*քանակը*	*միավորի գնահատման գինը*	*միավորի մեկնարկային գինը*
1	*Ոսկյա կախազարդ՝ 560 հարգի, 9.8 գրամ*	*1 հատ*	*107.800 ՀՀ դրամ*	*80.850 ՀՀ դրամ*
2	*Ոսկյա մատանի ամուսն 950 հարգի 7.8 գրամ*	*1 հատ*	*148.200 ՀՀ դրամ*	*111.150 ՀՀ դրամ*
3	*Ոսկյա մատանի ամուսն 950 հարգի 5.4 գրամ*	*1 հատ*	*102.600 ՀՀ դրամ*	*76.950 ՀՀ դրամ*

Ներկայացվում է հարկադիր էլեկտրոնային աճուրդի, էլեկտրոնային համակարգի կիրառմամբ՝ հարկադիր կատարման ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի՝ ***http//harkadir.ajurd.am*** *կամ* ***www.ajurd.am,*** *միջոցով:*

Հարկադիր էլեկտրոնային աճուրդի սկիզբը՝ 29.07.2019թ թվականին:.

Որոշումը ուղարկել կողմերին:

Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ Վարչական դատարան կամ վերադասության կարգով որոշումը ստանալու օրվանից 10 օրվա ընթացքում:

‹‹Դատական ակտերի հարկադիր կատարման մասին›› ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Ավագ Հարկադիր կատարող,
արդարադատության ավագ լեյտենանտ *Էդ. Չոբանյան*

Ծ Ա Ն Ո Թ ՈՒ Թ Յ ՈՒ Ն. Յուրաքանչյուր լոտի հարկադիր էլեկտրոնային աճուրդի ավարտի հաշվարկային ժամ է համարվում կայքում տվյալ լոտի վերաբերյալ ծանուցումը հրապարակելու 10-րդ օրվան հաջորդող աշխանտանքային օրվա համապատասխան ժամը: Յուրաքանչյուր չկայացած հարկադիր աճուրդից հետո՝ երրորդ աշխատանքային օրը, կայքում զետեղվում է կրկնակի հարկադիր էլեկտրոնային աճուրդի դրված լոտի մասին ծանուցումը:

Եթե աճուրդը չի կայացել գնորդ չլինելու կամ լոտի մեկնարկային գնի հավելում չկատարվելու հիմքով, ապա հաջորդ հարկադիր աճուրդ կազմակերպելուց վաճառվող լոտի մեկնարկային գինն իջեցվում է նախորդ աճուրդի համար սահմանված մեկնարկային գնի տասը տոկոսի չափով: Եթե աճուրդը չի կայացել գնորդի կողմից լոտի գնման գինը սահմանված ժամկետում չվճարվելու կամ առուվաճառքի պայմանագիրը չստորագրելու հիմքերով, ապա լոտի մեկնարկային գնի իջեցում տեղի չի ունենում: Եթե պարտապանն ունի այլ գույք, ապա լոտի մեկնարկային գինը տասներորդ հարկադիր աճուրդից հետո հաջորդ աճուրդներում չի իջեցվում: Եթե պարտապանը չունի այլ գույք, ապա հաջորդ աճուրդներում լոտի մեկնարկային գինը չի իջեցվում քսաներորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.4 հոդվածի 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերի համաձայն երկրորդ և յուրաքանչյուր աճուրդից հետո, լոտը /գույքը/ չվաճառվելու դեպքում պահանջատերը աճուրդի ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում իրավունք ունի պահանջի դիմաց այն ընդունել այդ աճուրդի մեկնարկային գնով: Պահանջատերը պահանջի դիմաց լոտը իրեն հանձնելու վերաբերյալ գրավոր պահանջը կարող է ներկայացնել ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն մինչև չկայացած աճուրդից հետո երկրորդ աշխատանքային օրվա ավարտը: Գույքը /լոտը/ պահանջատիրոջը հանձնվում է վերջինիս կողմից կատարողական գործողությունների կատարման ծախսերը վճարելուց, իսկ գույքի /լոտի/ հանձնման կապակցությամբ հարկեր վճարելու պարտականություն առաջանալու դեպքում նաև դրա կատարումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելուց հետո: